44. ԹԸԼԻ

Կէղի, չէղի, խընձ աստված աղեկ չէղի։

Կէղի իրիկ ու կնիկ, աղչիկ մի։ Կնիկն ա, օրմ՝ օրերուց կընգնի խիվանդ, օսիաթ կէնա իրկան, կըսա.—Մա՛րթ, ես օր մեռա, իմ շորեր ո՛ն օր խագավ, զէնի առես. հետ քու աղչիկն լե էղնի։

Էդի է, ըստհախ հ՝ընգավ, մեռավ։ Մացին սուգ էրկուս լե։ Օր մի դրրկրցներ էկան, ասին.—Ա՛ղչի, խերիք ա, հ՝ըմեն մարդու մեր կմեռի, քու մենակ չի, արի էրթանք բաղնիս, քու գլոխ լվա։

Կըսա.—Ջըմ հ՝իգամ։

Ջոռով կխագուն մոր շորեր, մատնիկ կէսկեն մատներ, ըստհախ կառին էրթան բաղնիք։ Կվլանան, կառնին հ՝իքան տուն, կըսեն.—Քու գլոխ անուշ։ Ու կթորկեն էրթան ուրենց տներ։

Կէրթան ուրենց տներ։ Խեր փրցավ հ՝իրկուն շուկից էկավ։ Տեսավ, յա՜, իգա ուր կնդան շորեր ուր աղչիկն խաքեր ա, կասա.—Աղչի՛կ, քու մոր օսիաթ ես չկոտրեմ։ Քու մեր օսիաթ էներ ա, թե՝ «Իմ շորեր ո՛ն օր խագավ՝ զէնի պտի առնիս, կուզա քու աղչիկն էղնի»։

Աղչիկ լե կասա.—Խերիկ, մ՝էնե, մեղք ա, չէ՞ դու իմ խերն ես, ես իմա՞լ քե առնեմ։

Խեր կասա.—Իլլահի կառնիմ։

Աղչիկ կասա խոր.—Դե, կանի հ՝ելիմ դուս, հ՝իգամ, առնիմ քե, ախար, ճար չիկա, մեղք քու վիզ։

— Գելիս դուս, կփախիս։

— Ջը փախիմ, կուզենաս, թել մի կապա իմ ծեռ։

Թելն ա, խեր կապեց ծեռ։ Հ՝ելավ դուս, թել կապեց ծառ աղ-
ջիկ, թելն օր կապեց ծառ, թորկեց փախավ։ Խերն ա քաշեց, քա-
շեց թել, աղջիկ չեկավ։

— Է՞յ վա՞խ,—ասաց,—ես իմա՞լ թորկեցի իմ ծեռնեն փա-
խավ աղջիկ։

Աղջիկն ա գնաց, գնա՞ց, գնա՞ց խովրվու մը ռաստ էկավ, խո-
վրվուն ասաց.—Խովի՞վ, խովիվ, ա՞ռ քե օսկի մի, օշխար մի մոր-
թե, միս քե, կաշին ու փորն ընձի։

Խովիվ բերեց ըսդախսի, օշխար մի մորթեց, քոթեց խանեց,
փոր տվեց աղջկան, քաշեց ուր գլոխ. կաշին լե առավ կարեց, քա-
շեց վըր ուրին, մտավ ըդ փոսթի մեշ։ Հ՝ելավ օշխրի կայտա մրկ-
մրկաց. գնա՞ց գնաց Արևելաց թաքավորի ծիանքներու թավլի դը-
ռան ռաստ էկավ։ Դուռ բացին օր ծիանք թիմբեն մշկըներ։ Գող-
տուկ ցըլաց մտավ ներս, մշկըներ չտեսան։

Դարման օր տվեցին, նուշ ու քիշմիշ էր։ Աղջիկ ըսդհախ հ՝ելավ
գնաց նուշ ու քիշմիշ կերավ, ծիանք մացին անոթի։ Թաքավորի
տղեն գիքա տեսնա օր ծիու փոր պարակ ա, ղաիֆ ա, կասա մշկը-
նեբուն.—Ծին շատ ղաիֆցեր ա, յան դուք կուտեք, յան կծախեք,
դողրին չասեք, ծըր վիզ կզարկեմ։

Մշկըներ լե կըսեն.—Թաքավոր ապրած, մընք բան չէնինք։

Թաքավորն ա կխանա, զէն էրկու մշակ, ուրիշ էրկու մշակ
կպերա, ծիու հ՝առեճ, օր ծին պախա։

Էմլե կպահեն, քիշմիշն ու նուշ կտանին լցեն ծիու հ՝առեճ,
աղջիկ կիքա ուտա։

Թաքավորի տղեն գելնի հ՝իքա, տեսնի, թե մշկըներ խորոտ
կպախե՞ն ըզծին։

Տեսի օր ծիու փոր էմլե քաշվե՝ անոթի է։

Կասա.—Մշկըներ, էդ քիշմիշ պերեր եք կերեր եք, ծախեր եք,
Ֆիմ ծին անոթընե կփիտնա, յա՞ն դողրին կասեք, յա՞ն ծեր վիզ
կզարկեմ։

Էնոնք լե կասեն.—Թաքավոր ապրած, մընք բան չէրեր ենք,
Նե՞ կերեր ենք, նե՞ ծախեր ենք։

Ըսդհախ էնի ա հ՝ելավ։ Թաքավորի տղեն էկավ օր ուր ծիանք
դարմընա, նուշ ու քիշմիշ իդա։

Բերեց կեր տվեց ու պախկըվավ։ Տեսավ օր, հանտե էնտեխեն
հայվան մի մրկմրկաց էկավ, մտավ ծիու մսուր, խորտեց ծիու
հ՝առեճի քիշմիշ ու կերավ։ Ծին մնաց անոթի։

Թաքավորի տղեն ա, ասաց.—Աստծու հայվան, արի քի տա-
նիմ պահիմ։

Առավ զէտ հայվան ու գնաց տուն։ Անուն լե դրեց Թըլի։

Ասաց.—Նանե՛, իշկա՛, իմ արևն օր կսիրես, դու ղիմ Թըլին աղեկ պահես, ինչ օր իմ կերակուլ ես կուտեմ, իմ Թըլու բաժին խանես։

Թըլին ա, կուտա ուրին, կխմա, տան մեջ կօլորտա։

Օր մի դելնին խարսնիք կէնեն դեղի մեջ։ Կիքան Արևելաց թաքավորի կնիկն ու տղեն կանչեն խարսնիս։

Թըլին գիքա էն դեխեն կմըկմըկա էտոնց հ'առեճ, կասա.— Ընձի խանեք դուս, բակի մեջ։

Թըլին ա խանեցին դուս, կերակուր ու խաց տվեցին ու իրանք գացին խարսնիս։

Թըլին ա, հ'ելավ էնտեխեն, խացեր դրեց պատուխան, փոսթ' լե խանեց, դրեց պատուխան, էղավ խուռնիկ-խըրեղեն աղչիկ մի... խարսնիք, դյո՛ր ես, էկա քե։

Էտի ա, կէրթա խարսնիք, մտի խարսնըքի մեջ։ Գելնի կանի խաղ մի կխաղա, օր մարդու խելքն ու ֆարման կէրթա։

Թաքավորի տղեն զինք կգողնա, թալա էտոր կըշտի խետ, կասա.—Աղչիկ, դու ի՞նչ էրկրացի ես։

Կասա.—Ես Արևելաց թաքավորի աղչիկն եմ։

Կասա.—Ես քըզի կառնեմ, պի մատնիքներ փոխենք։ Փոխեցին, աղչիկ թորկեց էկավ։ Ուր Թըլին խագավ, նստավ դուռ, շուր թաքավորի կնիկ ու տղեն էկան։ Էկան տեսան օր դրռ կերակուր չկերեր ա։

Ասին.— Վա՛յ, աստծու հայվան, դրռ շուր էդա գախ բան չկերեր ա։

Մացին, ասաց տղեն.— Նանե՛, լուսուն հ'ելի, զի պատրաստութեն տես, ես պտի էրթամ էն աղչկա եդև։

Մեր կասա.— Օրթի, հ'որի՞ կէրթաս, Արևելաց թաքավոր ո՞ր մեկն ա, մենք ենք, էլ հ'ուսդե՞ն ա։

— Կէրթամ, խո մենք մենակ չե՞նք Արևելաց թաքավոր։

Մեր լուսուն հ'ելավ, հալվա, գաթա կշաղվա, շիքա։ Թըլին էկավ խաովավ մեջ, մեր վերցուց օր զարկեր։

Տղեն ասաց.— Քու անախան[1] աստվածն օր կսիրես, իմ Թըլու խաթր չկպիս, ի՞նչ կէնա, թ'էնա։

Մերն ա, ծեն չէնեց։ Թըլին առավ կտոր մի խմոր, խաղցավ մեջ, մատնիկ խանեց քըպսեց մեջ, զարկեց թորվան կող, պրծավ, գնաց թոնիր էղավ կուտ։ Թըլին նստավ մուխաթ կմնա էն կտան։

---

1 Անհուն, անսահման (Ս. Բ.)։

Էփավ, փրցավ, խանին տվին Թրլին։ Թրլին ա, կուտ տարավ պա-
խեց։ Լուսմութ հ'ելավ թաքավորի տղեն մշկընեռով զբեռներ կպռնա
հալվա, գաթա։ Թրլին առավ կուտ, էնդեխեն էկավ, կթալա պեռնե-
ռու մեջ։

Մերն է կասա.— Ա՜յ, ըտ պըղծուկ Թրլու ծեռներու կուտ տա-
նիս ուտե՞ս։

Կխանա ղուս զկուտ, Թրլին գիլա, կասա.— Իլլահի իմ կուտ
պիտի տանիս։

Թաքավորի տղեն կասա.— Թող տանեմ, մշկըներ կուտեն,
խո ես չուտեմ։ Թալա պեռներու մեջ։ Պեռներ բերին բառցան։

Շատ կէրթան, քիչ կէրթան, միայն տեր աստված գիտա։ Խաց,
գաթեն, հալվեն ղրհ'ըմեն կուտեն, կխըլըսի։

Վերցու թաքավորի տղեն կասա.— Ցամա՜ն, մշկըներ, անոթնե
ես ջարթա։

Կասեն.— Թրլու կուտն ա մացեր, կուտե՞ս։

— Խա՜, անոթի եմ, կուտեմ։

Կիսելու քիմին[1] մատնիկ հ'ելավ կտի միջեն։

— Է՜յ վա՜խ,— ըսաց,— ամլեմ ընձի չարչըրեց, տանջեց, աղ-
չիկը ի՞նչ ջուն կէղի կըստու կչարչրա, օր ուրին կադըր էղի։

Հ'ելավ մշկընեռուն ասաց.— Արե՜ք դառնանք։

Մշկըներ լե ասին.— Թաքավոր ապրած, դու կասիր՝ «Աղչիկ
չուր չդըտիմ, ըսպանվիմ, ջարդվիմ՝ ետ չդառնամ», դու իմա՞լ ետ
կդառնաս։

Էն լե կասա.— Աղչիկ մ'ապով խո զիս, ծիանք, մշկըներ չջար-
դե՞մ։

Հ'ելան, ընդան ճամբախ էկան։ Իշան ուրան դուռ։

Մեր ասաց.— Ցա՜, տղա՜, էկար, ու աղչիկ չբերի՞ր։

Ասաց.— Չգտա։

Ասաց.— Դու կասիր՝ «Չդառնա՜մ, օր չդտիմ»։

Ասաց.— Զէն աղչիկ ջուտ կգտիմ, դու ջուր տաքցու, իմ Թրլին
լվանամ, իմ Թրլին իմա՞լ ա։

— Իմալ ա՞, նեղ մտե քու Թրլին, Թրլին խորոտ պախեր եմ։

Վերցուց ասեց.— Ջուր ընձի տաքցու բե։

Ջուր տաքցուցին, ըսեց.— Թրլին կանչի հ'իգա։

Թրլին հ'իմցավ, փախի դես ու դեն, չի գա։ Ջոռով կբերեն։
Կասա.— Ջախու մի բերեք։

---

1 Պես (Ս. Բ.)։

Մեր կասա.— Տղա՜, դու ծռա՞ր, դու Թըլին շատ կսիրիր, միտք ունիս Թըլին մորթի՞ս։

Լն լե կասե.— Կանչե թըխ դա, քի տավի չի կա։

Մեր կանչեց Թըլին, էկավ։ Տղեն խանեց զդանակ, թալեց Թըլու փոսթ ձևեց։ Խուռնիկ խրեղեն աղչիկ թռավ դուս, մեր շիվարավ, ասեց.— Յա՜, էդի խարսնիսի աղչիկն ա, օր կասեր՝ «Ես Ալևևլաց թաքավորի աղչիկն եմ»։

Տղեն վերցուց ասաց.— Էն օր, օր կուտ թխեց իմ մատնիկ ղրեց մեջ, խացն օր խըլըսավ, կուտ կերա, մատնիկ հ՚ելավ մեջեն։

Տարան Թըլու գլուխ աղեկ մի լվացին ու խարսնիս էնեց։

Էնոնք խասան ուրանց մուրազին, դու լե քու։